

"ՀամաՀայկական Էջ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ Ընթացակում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

library

ԱՌԵՎՈՐԱԿԱՆ ԿԱՐՈՒՅՈՒՆ ՀԵՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱՎԱԼԻՔՆԵՐՆ ՏՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՅ ԵՎ ԲԱՐԵՐ
ԸՆԴՊՐՈՊՐԵԴՈՒՅՆԵՐՆ ԳՈՐԾՈՒՅ

ԹԵՎԱԿ ԳՐԵՐԻ ԽԵՐԱՄՈՒՄ ՄԱՆՏՈՎԱԿԱՆ ԿԱՐՈՒՅ
ԽՄԱՆԱ, "ԽՈՎԱՅԵՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿ ԳՈՐԾՈՒՅ" ԿՈՎԻՆ

www.freebooks.am

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐ ՈՐ ՕՎԵՎԼԻՄ ԵՎ ՄԵՐ ԿԱՅԵՐ
ԾԱՎՈՐՆԵՐ ԵՎ ՀՈՎԵԼԻ ԸՆԴԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՅՆԵՐՆ



ՎՐԱ ՄԻԱ ՝ freebooks@rambler.ru



Ռ. Խ. ԽՈԶՈՏՔՅԱՆ

ՄԱԿԻ
ԹԱՐԱԽԱԲԵՏՎԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴԻԹՅՈՒՆՆԵՐ

“ՀԱՅԱՍՏԱՆ”

ՀՈՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍԱՆԼՈՒՍՏՈՒՆ

Ռ. Խ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՄԱՃԿԻ
ԹԱՐԱԽԱԲՇՏԻԿԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խաչատրյան Ռ. Խ.

Խ 28 Մաշկի թարախաբշտիկային հիվանդաւրյուններ.— Եր.:
Հայաստան, 1979, 17 էջ:

Մաշկի թարախաբշտիկային հիվանդությունները մարդու մաշ-
կային ծածկույթն ախտահարող հիվանդություններ են, որոնք առա-
ջանում են թարախածին մանրէներից:

Գրքույկում տրվում են հակիրճ տեղեկություններ մաշկի թարա-
խաբշտիկային հիվանդությունների, դրանց հարուցիչների, առաջաց-
ման պայմանների, ախտանիշների և պրոֆիլակտիկայի վերաբերյալ:

Գրքույկը նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար:

4102000000 (217)
701 (01) 79 122—79

ԳՄԴ 55. 83

**ՄԱՇԿԻ ԹԱՐԱԽԱԲՇՏԻԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՐՈՒՑԻՉՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՄԱՆՆԵՐԸ**

Մաշկի թարախաբշտիկային հիվանդություններն առաջանում են այն դեպքում, երբ մաշկի մեջ ներթափանցում են թարախածին մանրէները՝ դրանցից են հաճախ հանդիպող ստաֆիլոկերը և ստրեպտոկոկերը։ Այդ մանրէները բավական տարածված են բնության մեջ՝ օդում, ջրում, հողում, շրջապատի իրերի վրա և համարվում են մարդկանց մաշկի մշտական բնակիչները։ Սովորական պայմաններում դրանք ախտածին չեն, այսինքն՝ հիվանդություն չեն առաջացնում։ Սակայն բավական է, որ ստեղծվեն նպաստավոր պայմաններ (վնասվի մաշկի մակերեսը՝ քերծվի, կտրվի և այլն) թարախածին մանրէները ներթափանցում են մաշկի մեջ և առաջացնում թարախաբշտիկային հիվանդություններ։ Այդ հիվանդությունների առաջացմանը նպաստում են և այլ գործոններ, ինչպես օրինակ՝ օրգանիզմի մրսածությունը, թույլ դիմադրողականությունը, նյութափոխանակության խանգարումները (շաքարախտը, զիտամինների պակասությունը և այլն), ներքին օրգանների խրոնիկական զանազան հիվանդությունները, ներվային համակարգի ֆունկցիոնալ խանգարումները, գերձոգնածությունը և այլն։ Կարևոր նշանակություն ունի ինչպես կենցաղում, այնպեսև աշխատանքում տեղ գտած հակասանիտարական վիճակը, աշխատանքում արտահագուստից, պաշտպանողական այլ միջոցներից չօգտվելը, մաշկի և եղունգների վատ խնամքը, բաղնիքից ժամանակին չօգտվելը, սպիտակեղենի և առհասարակ հագուստի ժամանակին չփոխելը և այլն։ Մաշկից վերցրած նյութի միկրոսկոպիկ հետազոտությունները ցույց են տալիս, որ մաշկի հիգիենային չհետևողների մոտ թարախածին մանրէները մի քանի անգամ ավելի են, քան

մաքուր մաշկ ունեցողների մոտ։ Լոգանք ընդունող յուրաքանչ-
յուր մարդու մաշկային ծածկույթից ջրին են անցնում միլիո-
նավոր մանրէներ։

Ինչպես հայտնի է, մարդու մաշկը ունի պաշտպանական
ֆունկցիա։ Մաշկի եղջրային շերտը ամբողջ կյանքի ընթաց-
քում, մարդու աշքից աննկատ, հեռանում է մաշկի մակերևսից,
հետևաբար և իր հետ հեռացնում է մանրէներին։ Հենց դրանով
էլ պայմանավորված է այն, որ չնայած մաշկի մակերևսին հոծ
թվով մանրէների առկայությանը, ոչ բոլոր մարդիկ են, որ հի-
վանդանում են մաշկի թարախաբշտիկային հիվանդություննե-
րով։ Բացի դա, մաշկի մեջ եղած քրտնագեղձերը և ճարպա-
գեղձերն արտադրում են այնպիսի նյութեր, որոնք ոչ միայն
մաշկը պահում են փափուկ, էլաստիկ վիճակում, այլ նրա մա-
կերևսին ստեղծում են թթու միջավայր, որն աննպաստ է թա-
րախածին մանրէների ակտիվ գործունեության, հետևաբար և
թարախաբշտիկային հիվանդությունների առաջացման հա-
մար։ Իհարկե, չպետք է մոռանալ նաև այն, որ առողջ մաշկ
ունինալու համար անհրաժեշտ է ունենալ առողջ, կոփված օր-
գանիկմ և կայուն ներվային համակարգ, որոնք ընդհանրապես
նողառոտում են մաշկի պաշտպանողական ֆունկցիային։ Մա-
կայն յուրաքանչյուր ոք իր կյանքի ընթացքում կարող է գրա-
նիքի այնպիսի պայմաններում (իսկ այդ պայմանները նըշ-
վեցին վերինում), երբ թարախածին է մաշկի պաշտպանողական
գերր թարախածին մտնրէների նկատմամբ, և առաջանում են
թարախարշտիկային հիվանդություններ։

ՍՏԱՖԻԼՈԿՈԿԵՐԻՑ ԱՌԱՋԱՑԱՆ ԹԱՐԱԽԱԲՇՏԻԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստաֆիլոկոկերից առաջացած մաշկի հիվանդություններն
ունեն երկու ընդհանուր ախտանիշներ՝ առաջինը, թարախա-
ցին բնույթի և երկրորդը, միշտ ախտահարվում է կամ մազա-
պարկը, կամ քրտնագեղձը։

Ստաֆիլոկոկերը առաջացնում են մաշկային հետևյալ հի-
վանդություններ։

Ֆոլիկովիաներ։ Երբ թարախային բորբոքումը տեղակայ-
վում է մազապարկի արտաքին բացվածքում, ֆոլիկուլիտը կոչ-
4

վում է մակերեսային: Այս դեպքում առաջանում է գնդասեղի գլխիկի մեծության թարախաբշտիկ, որի կենտրոնում ցցված է լինում մազը, շրջապատված բաց վարդագույն բորբոքային պըսակով: Թարախաբշտիկը մեկ-երկու օրվա ընթացքում՝ չորանալով կեղևակալվում է: Շուտով կեղևիկը պոկվում է, և մաշկը ապաքինվում: Այն դեպքում, եթե բորբոքումը ընդգրկում է ամբողջ մազապարկը, հիվանդությունը կոչվում է ֆոլիկուլիտ. դարձյալ առաջանում է թարախաբշտիկ՝ կենտրոնում ցցված մազով, որի շուրջը բորբոքային կարմրավուն պսակն ավելի ինտենսիվ է արտահայտվում, շոշափելիս հատակում զգացվում է հանգուցածե գոյացություն, և հիվանդը ցավ է զգում:

Ֆոլիկուլիտների այս երկու ձևերի առաջացմանը նպաստում են մաշկի վրա ազդող զանազան արտաքին գրգռիչներ՝ սափրվելը, եթե հիգիենայի կանոնները չեն պահպանվում, արտադրության մեջ՝ քսայուղերը, առհասարակ մաշկը կեղտոտ պահելը և այլն: Շատերի մոտ դրանք կարող են մի քանի օրում վերանալ, սակայն ոմանց մոտ այդ ֆոլիկուլիտները կարող են երկար պահպանվել, կամ առանց ընդմիջման՝ մեկի վերացմամբ, մյուսի առաջացմամբ, կամ էլ կարող են լրիվ վերանալ, ապա նորից կրկնվել: Այս դեպքերը հաճախ լինում են այն անձանց մոտ, որոնք բացի այն, որ գործ ունեն զանազան քսայուղերի հետ, հաճախ մաշկը վնասում են (փականագործներ, մոնտյորներ, մեքենա յուղողներ և այլ անձինք), և միաժամանակ ունեն թույլ դիմադրողականությամբ օրգանիզմ կամ քորով ուղեկցվող մաշկային այլ հիվանդություններ (քորելիս վնասվում է մաշկը, որտեղից և մուտք են գործում ստաֆիլոկոկերը), կարող են դեր խաղալ նաև նյութափոխանակության խանգարումները, ինչպես օրինակ՝ շաքարախտը:

Ֆոլիկուլիտներն առավելապես տեղակայվում են մաշկի բաց մասերում:

Սիկոզ: Սա խրոնիկ կրկնվող հիվանդություն է և հաճախ նկատվում է տղամարդկանց մոտ: Սիկոզը տեղակայվում է մորուքի, բեղերի շրջանում: Կանանց մոտ հազվադեպ է նըկատվում և տեղակայվում է ցալքի շրջանում: Այս հիվանդությունը նույնպես արտահայտվում է մազապարկերի բորբոքմամբ, սակայն մաշկի նշված տեղերում դրանց թիվն այնքան շատ է լինում, որ բորբոքային պրոցեսները միանում են իրար,

մաշկը կարմրում է, թարախաբշտիկները՝ չորանալով կեղեակալվում են, առաջանում է ցավի, քորի, մաշկի ձգվածության զգացողություն։ Ախտահարված մազերը պինցետով հեռացնելիս արմատային մասում նկատվում է հաստացում, որը թարախային կցորդ է։ Ընդհանրապես հիվանդությունը երկարատև է, կրկնվող, մարդու դեմքին տալիս է տհաճ տեսք, և այդպիսի հիվանդները հաճախ խույս են տալիս շրջապատից։ Այս հիվանդության պատճառը ստաֆիլոկոկն է, սակայն նրապաստավոր պայման է հատկապես սափրվելու ժամանակ մաքրություն չպահպանելը, բացի դա, մեծ նշանակություն ունի նաև օրգանիզմի ընդհանուր դիմադրողականությունը, որի մասին նշվեց վերևում։

Ֆուրունկուլ (Հիբան)։ Ֆուրունկուլը նույն ֆոլիկուլիտն է, սակայն այստեղ ստաֆիլոկոկերից առաջացած բորբոքումը տեղակայվում է ոչ միայն մազապարկում, այլ ընդգրկում է նաև նրա շուրջը եղած հյուսվածքը։ Այն մաշկի մակերեսից բարձրադիր է, կարող է լինել փոքր կամ մեծ։ Ֆուրունկուլի կենտրոնում հյուսվածքը մի քանի օրում մահանում է, սկսվում է ֆուրունկուլի թարախակալումը և հասունացումը, որին հաջորդում է մաշկի մակերեսին անցքի առաջացումը և թարախի արտադրությունը։

Ֆուրունկուլի հիմնական զանգվածը հանդիսանում է մահացած հյուսվածքը, դեղին գույնի խցանը և նրա շուրջը եղած չքայլքայված ինֆիլտրատը։ Մահացած խցանի հեռացմամբ բացվում է խոցը, որն սպիանում է և դրա տեղում մազայլես չի բուսնում։ Ֆուրունկուլի դեպքում հիվանդը կարող է ունենալ ուժեղ ցավի զգացողություն (նայած մաշկի որ շըրջանում է տեղակայվում), սարսուռ, ջերմության բարձրացում, ընդհանուր տկարություն, նամանավանդ, եթե միաժամանակ առաջանում են մի քանի ֆուրունկուլներ։

Ֆուրունկուլներ կարող են առաջանալ մաշկի զանազան մասերում։ Հատկապես վտանգավոր է, եթե առաջանում է դեմքին։ Նման դեպքում այն կարող է վտանգավոր բարդություն ստեղծել՝ առաջացնելով ուղեղի արյան անոթների թրոմբոզ և մահ։

Զի կարելի ֆուրունկուլը (անկախ նրա տեղակայումից) սեղմել խցանը հեռացնելու նպատակով, որովհետև հնարա-

վոր է, որ խցանը դեռ անջատված չլինի կենդանի www.e-pdf.com քից և սեղմելու հետևանքով մանրէները կարող են խորանալ շրջակա հյուսվածքի և արյան հոսքի մեջ՝ ստեղծելով մեծ վրտանգ հիվանդի կյանքի համար։ Ֆուրունկուներ հաճախ առաջանում են մաշկի այն մասերում, որոնք ավելի շատ շրման, ճնշման և կեղտոտման են ենթարկվում (պարանոցի, ձեռքերի, նախաբազուկների, գոտկատեղի, նստատեղի շրջաններում)։ Հաճախ մաշկի մի մասում միաժամանակ կամ մի քանի օրում առաջանում են մի քանի ֆուրունկուներ։ Դա ապացույց է այն բանի, որ ստաֆիլոկոկերը միանգամից մի քանի տեղից են ներթափանցել մաշկ, որի պատճառն, ինչպես ասացինք, մաշկի վնասվածքն է, գուցե և տաքացնող կոմպրեսը, որը ոմանք սխալմամբ դնում են առանձին ֆուրունկուների վրա։

Ֆուրունկույոզ: Դա հիվանդի այն վիճակն է, երբ ֆուրունկուների առաջացումը հաջորդում է մեկը մյուսին, և այդպիսով հիվանդությունը տեսում է բավական երկար՝ ամիսներ և նույնիսկ տարի։ Սակայն այս դեպքում ֆուրունկուներն ավելի թույլ են արտահայտվում, վերևում նկարագրված ձևի համեմատությամբ։ Հիվանդության այս տարատեսակի դեպքում մեծ է օրգանիզմի ընդհանուր վիճակի նշանակությունը։ Այդպիսի հիվանդների մոտ հաճախ առկա են լինում ներքին օրգանների հիվանդությունները, հատկապես ածխաջրատային փոխանակման խանգարումները՝ շաքարախտը։ Եթե հիվանդին նշանակում է համապատասխան դիետա և դեղորայք, ֆուրունկուների հետագա առաջացումը կանխվում է և վերանում։

Կարբունկով: Այս դեպքում միաժամանակ առաջանում են մի քանի ֆուրունկուներ, որոնց բորբոքային երևոյթները միաձուլվում են, ախտահարումը լինում է մեծ, խորը և ընդգրկում է ամբողջ մաշկի հաստությունն ու ենթամաշկը։ Կարբունկուը մաշկից խիստ բարձր է լինում, կապտագորշավուն գույնի։ Այն առաջացնում է ուժեղ ցավ, զերմության բարձրացում, գլխացավ, ախորժակի վատացում, ընդհանուր տկարություն, թուլություն։ Կարբունկուն ունենում է թարախաբշտեր, «հասունանալիս» բացվում են մի քանի խոցեր, աղտաղրվում է թարախ, ապա հեռացվում է մահացած հյուս-

վածքը, ինչպես ֆուրունկուլի դեպքում, իր գորշ, և գույնի խցանով և հիվանդությունն ավարտվում է կոպիտ սպիտով:

Հիդրադենիտ: Սա նույնպես ստաֆիլոկոկերից առաջացող հիվանդություն է, որն իրենից ներկայացնում է թևատակերի շրջանի խորը տեղակայված խոշոր քրտնագեղձերի բորբոքում: Այս քրտնագեղձերի յուրահատկությունն այն է, որ արտադրովող քրտինքը քրտնագեղձի ծորանով մտնում է մազապարկ, որի արտաքին բացվածքով միայն դուրս է գալիս մաշկի մակերես: Այս հիվանդությունը հաճախ առաջանում է այն անձանց մոտ, որոնք չեն հետևում թևատակերի (անոթային փոսերի) մաշկի մաքրությանը: Այդ մասերում առաջացած քրտինքը մացերացիայի է ենթարկում մաշկը, որով և ստեղծվում է հնարավորություն ստաֆիլոկոկերի ներթափանցման համար դեպի քրտնագեղձերը, և ի հայտ է գալիս հիվանդությունը: Սկզբում անութային փոսերի մաշկի խորության մեջ առաջանում է սիսեռի մեծության փոքր մի հանգույց, որը հնարավոր է շոշափել: Հանգույցը պինդ է և ցավոտ: Այն աստիճանաբար մեծանում է և արտահայտվում մաշկի վրա օվալաձև մի ուռուցքի ձևով (կաղինից մինչև ընկույզի մեծության), կապտակարմրավուն գույնով: Սկզբում հիվանդն ըզգում է աննշան, սակայն աստիճանաբար ուժեղացող ցավ: Այդ իսկ պատճառով սահմանափակվում նն ձեռքի շարժումները, և մարդը կարող է ժամանակավոր անաշխատունակ դառնալ, նամանավանդ, որ այս դեպքում նույնպես հիվանդը կարող է ունենալ չերմության բարձրացում, գլխացավեր, ընդհանուր տկարություն, ախորժակի վատացում: Մի քանի օրվա ընթացքում այդ բորբոքային գոյացության մեջ տեղի է ունենում թարախի կուտակում, մաշկի վրա բացվում է անցք, որից արտադրվում է բավականին առատ թարախ և պրոցեսը վերջանում է սպիտակմամբ: Սակայն միշտ չէ, որ կարող է միայն մի այդպիսի էլեմենտով հիվանդությունը վերանալ: Հնարավոր է, որ ստաֆիլոկոկերը թափանցեն հարեան քրտնագեղձի մեջ, և այդպիսով առաջանան նորերը. դրանով իսկ կարող է մեկը վերջանալ, մի նորն առաջանալ կամ էլ մի քանիսը միաժամանակ առաջանան: Այդպիսի դեպքում հաճախ առանձին էլեմենտների սուր բորբոքային պրոցեսները միանում են և առաջացնում տարածված ինֆիլտրատ, որն զբաղեցնում է

ամբողջ թևատակի փոսը և այդ ֆոնի վրա, պտուկներին ձևավորում է կարմիր վերնածայրերի գագաթներին դուրս են ցցվում հիվանդությանը տվել է «ուռ պտուկ» անունը): Այս հիվանդությունը հիմնականում առաջանում է թևատակերի փոսերում, սակայն կարող է առաջանալ և հետանցքի շուրջը, կանանց սեռական օրգանների արտաքին մասում, կրծքագեղձերի պտուկների շրջանում, քանի որ այդպիսի քրտնագեղձեր կան և այդ մասերում։ Հիվանդությունը սովորաբար տևում է 10—15 օր, սակայն առանձին դեպքերում՝ կապված նոր էլեմենտների առաջացման հետ, կարող է երկար տևել՝ շաբաթներ, ամիսներ։

ՍՏՐԵՓՏՈԿՈՎԵՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԹԱՐԱԽԱԲՇՏԻԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստրեպտոկոկերից առաջացած մաշկային հիվանդություններն ունեն որոշ ընդհանուր ախտանիշներ. հակառակ ստաֆիլոկային ախտահարման՝ մազապարկերի, քրտնագեղձերի և ճարպագեղձերի հետ կապված չեն, և ստրեպտոկոկային ախտահարման ժամանակ բշտիկները մաշկից բարձրադրիր չեն, այլ համարյա հավասար են մաշկի մակերեսին և պարունակում են շճային կամ շճաթարախային հեղուկ։ Ստրեպտոկոկային այդպիսի բշտիկները կոչվում են իմպետիգն։ Իմպետիգնը ունի իր տարատեսակները, որոնք պայմանավորված են բշտիկի տեղակայումով և ձևով։

Ճեղքավոր իմպետիգն։ Մրա դեպքում լինում է շճային-շճաթարախային բշտիկ, և այն տեղակայվում է բերանի բացվածքի անկյուններում։ Բշտիկը չորանալով, վերափոխվում է հարդադեղնավուն կեղեխ, և բերանի շարժման պատճառով կենտրոնում առաջանում է ճեղք։ Ժամանակին չբուժվելիս հիվանդությունը կարող է երկար տևել։

Մակերեսային մատնաշունչ։ Այս դեպքում եղունգի շուրջը առաջանում է բուշտ՝ լցված շճաթարախային պղտոր հեղուկով, բուշտը կարող է մեծանալ և ընդգրկել մատի եղունգային ֆալանգը։

Բշտավոր իմպետիզությունը: Այս տարատեսակի ժամանակը բըշ-
տերը մաշկի վրա խիստ են արտահայտվում՝ լարված թաղան-
թով, լցված շճաթարախային հեղուկով։ Սակայն այդպիսի
լարված թաղանթների հետ հաճախ առաջանում են նաև մաշ-
կի մակերեսին համարյա հավասար սովորական բշտիկներ։

Նորածինների համահարակային բշտիկային հիվանդու-
թյուն։ Բնորոշվում է նրանով, որ նորածնի մաշկի տարբեր
մասերում առաջանում են բշտեր՝ լցված շճային, շճաթարա-
խային հեղուկով։ Այդպիսիք չեն առաջանում ափերում և ներ-
բաններում։ Այս հիվանդությունը խիստ վարակիչ է և այն
հաճախ հանդիպում է ծննդատներում։ Եթե այդպիսի հիվանդ
երեխային չմեկուսացնեն, վարակը արագությամբ կանցնի
առողջ երեխաներին։ Նորածին երեխաները համաճարակային
բշտիկային հիվանդությամբ կարող են վարակվել իրենց խնա-
մողներից, եթե վերջիններս ունեն ստրեպտոկոկային մաշկա-
յին հիվանդություն, ինչպես նաև տակաշորերից, եթե դրանք
մաքուր չեն։ Այդ հիվանդությամբ վարակված նորածիններին
անմիջապես պետք է ենթարկել բուժման, հակառակ դեպքում,
հատկապես թույլ երեխաների մոտ, հիվանդությունը կարող է
վերջանալ մահով։

Մաշկի ստրեպտոկոկային ախտահարման վերևում թր-
վարկված բոլոր տարատեսակները ժամանակին բուժման
ենթարկվելու դեպքում, սովորաբար վերանում են մինչև 10
օրվա ընթացքում, հակառակ դեպքում կարող են տևել շա-
բաթներ և նույնիսկ ամիսներ։

Ստրեպտոկոկային խոց կամ Էկրիմա։ Հանդիպում է հա-
ճախ չյուծված, թուլակազմ անձանց մոտ։ Տեղակայվում է
հիմնականում սրունքների վրա։ Սկզբում գոյանում է թարա-
խային բուշտ, որից առաջանում է մաշկի խորը շերտերն ընդ-
գրկող բավականին կոմպակտ, մուգ շագանակագույն, դրա-
մաշափ կեղեւ։ Կեղեւի շուրջը մաշկը դառնում է կարմրավուն և
ցավոտ։ Կեղեւը պոկվելուց հետո նրա տակ բացվում է բավա-
կանին խորը խոց՝ լցված թարախով։ Բարեհաջող ընթացքի
դեպքում 2—3 շաբաթում վերքը լավանում է սպիացմամբ։
Սակայն որոշ դեպքերում, եթե հիվանդը թուլակազմ է, դիմա-
դրողականությունը թույլ է, կարող է երկար տևել՝ մի քանի
ամիս։

Բացի վերը նշված տարատեսակներից, մաշկի www.2-pdf.com բշտիկային հիվանդություններ կարող են առաջանալ ստաֆի-լոկոկերի և ստրեպտոկոկերի միաժամանակ ախտահարմամբ, այսպես կոչված խառը՝ ստրեպտոստաֆիլոկոկային իմպե-տիգո։ Այս հիվանդությամբ հաճախ հիվանդանում են երեխա-ները, անշափահասները և երիտասարդ կանայք։ Հիվանդու-թյունն արտահայտվում է բերանի շուրջը, քիթ-այտային ծալ-քերում և հաճախ տարածվում է ամբողջ դեմքի վրա։ Այն կա-րող է տարածվել նաև վերջույթների և իրանի վրա։ Այդպիսի հիվանդների մոտ կարող են լինել և ընդհանուր ախտանիշներ՝ շերմության քիչ բարձրացում, ավշային հանգույցների մեծա-ցում և ցավ։

Հիվանդությունն սկսվում է ստրեպտոկոկային թարախա-բշտիկների հանկարծակի առաջացմամբ, որոնք մաշկից առանձնապես բարձրագիր չեն, ունեն շճաթարախային պա-րունակություն, սակայն ստաֆիլոկոկային վարակի միանա-լուց հետո բշտիկները դառնում են ավելի արտահայտված, թարախը դառնում է թանձր և ստանում դեղնականաշավուն գույն։ Այդ թարախաբշտերը՝ շորանալով առաջացնում են խո-շոր կեղևներ։ Հիվանդությունն աշքի է ընկնում խիստ վարա-կիչ բնույթով, հատկապես երեխաների համար։ Այն տևում է 1—2 շաբաթ և կարող է վերանալ, կեղևների տեղում թողնելով մաշկի գույնի որոշ փոփոխություն, որը հետագայում վերա-նում է առանց կայուն հետք թողնելու, և մաշկն ստանում է նորմալ տեսք։ Սակայն թուլակազմ անձանց մոտ կամ ոչ ուստիոնալ բուժման դեպքում հիվանդությունը կարող է տևել երկար՝ 1—2 ամիս։

ՄԱԾԿԻ ԹԱՐԱԽԱԲՇՏԻԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱՆ

Չնայած բնակչության կուտուր-կենցաղային և աշխա-տանքային պայմանների բարելավմանն ու բարձր մակարդա-կին, թարախաբշտիկային հիվանդությունները այսօր էլ շա-րունակում են որոշակի տեղ՝ գրավել մարդու ախտաբանու-թյան մեջ։

Դրանց վերացման կամ նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր քաղաքացի, թե՛ աշխատանքի վայրում և թե՛ կենցաղում մաշկը պաշտպանի զանազան վնասակար ազդակներից։

Արտադրության յուրաքանչյուր ճյուղում այս կամ այն շափով առկա է վնասակար ազդեցությունը մաշկի վրա, որը կարող է կապված լինել, կա՛մ արտադրության տեխնիկական պրոցեսների, կամ էլ հակասանիտարական վիճակի հետ։ Այստեղից էլ հետևություն, որ արտադրության մեջ թարախաբշտիկային հիվանդությունների դեմ պայքարը պետք է տանել երկու ուղղությամբ՝ տեխնիկական պրոցեսների կատարելագործմամբ և սանիտարահիգիենիկ միջոցառումների բարելավմամբ։

Արդյունաբերական ձեռնարկություններում բանվորների մոտ թարախաբշտիկային հիվանդությունների առաջացմանը նպաստում են մաշկի միկրոտրավմաները (քերծվածքները, կտրվածքները և այլն), կեղտոտվելը, արտադրամասերում օդի բարձր կամ ցածր ջերմաստիճանը։

Բանվորները միկրոտրավմաներ կարող են ստանալ մեքենաշինական, հաստոցաշինական, մեխանիկական և այլ գործարաններում՝ մետաղի փոշուց, տաշեղներից, փշրանքներից, գործիքների անսարքությունից, ինչպես նաև մերկ ձեռքներով կամ շորի լաթերով հաստոցները մաքրելու ժամանակ։

Միկրոտրավմաներից խույս տալու համար անհրաժեշտ է աշխատատեղերը, գործիքները պահել կանոնավոր վիճակում, հաստոցները մաքրելիս պետք է օգտագործել ձեռնոցներ, խողանակներ, կարթեր և այլն, անհրաժեշտ է, որ արտադրամասերը լինեն լուսավոր։ Միկրոտրավմաները կարող են առաջանալ նաև արդյունաբերության մի շարք այլ բնագավառներում և շինարարությունում՝ աշխատողների մոտ։ Սակայն տեխնիկայի զարգացումը և աշխատատար պրոցեսների ավտոմատացումը հանգեցնում են միկրոտրավմաների պակասնեցմանը։

Միկրոտրավմա առաջանալիս անհրաժեշտ է որքան հնարավոր է այն շուտ մշակել բրիլյանտային կանաչի, մեթիլենկապույտի սպիրտային լուծույթներով կամ յոդով, իսկ մաշկի վնասվածքի շուրջը պետք է մաքրել սպիրտով և դնել վիրա-

կապ: Ավելի հարմար է օգտագործել նովիկովի հեղուկը, որը միաժամանակ և փոխարինում է վիրակապին:

Այն պետք է օգտագործել հետևյալ կերպ՝ նախօրոք տրավ-մայի ենթարկված մաշկը լվանալ, մաքրել, ապա բա-րակ շերտով քսել հեղուկը: Վերջինս չորանալով դառնում է հերմետիկ պաշտպանող թաղանթ և կարիք չի լինում վիրա-կապ օգտագործելու:

Նշված դեղորայքը պետք է ունենալ արտադրամասերի դե-ղարկղներում և առկայաններում:

Արդյունաբերության մեջ բանվորների մաշկը կարող է կեղտոտվել քսայուղերով, նավթանյութերով, հանքանյութերի, ածխի, ցեմենտի, տորֆի, փայտի, կարբիտի և այլ նյութերի փոշիներով: Մաշկը փոշուց պաշտպանելու համար անպայման պետք է օգտագործել արտադրական արտահագուստ, որն հա-մապատասխանի տվյալ մասնագիտությանը: Արտահագուս-տը պարբերաբար պետք է լվանալ գործարանի լվացքատանը և ժամանակին փոխել: Յուրաքանչյուր բանվոր պետք է ունե-նա իր սովորական հագուստի և արտադրական արտահագուս-տի պահարան: Ամեն օր աշխատանքից հետո անհրաժեշտ է լողանալ գործարանի ցնցուղում, հազնել մաքուր հագուստ և ապա դուրս գալ գործարանից: Միայն այդ ձևով վարվելով, բանվորը կարող է պատշաճ ձևով պահպանել անհատական հիգիենան և զերծ մնալ թարախաբշտիկային հիվանդություն-ներից: Առհասարակ այդպես պետք է վարվի յուրաքանչյուր ոք, ում մաշկը կեղտոտվում է աշխատանքի ժամանակ: Մա-կայն կարող են լինել աշխատատար այնպիսի պրոցեսներ, երբ կեղտոտվում են աշխատողների մաշկի միայն բաց մասե-րը: Այդպիսի անձինք, իհարկե, կարող են բավարարվել միայն այդ մասերը լվանալով:

Քիմիական վնասակար նյութերից մաշկը պաշտպանելու համար անհրաժեշտ է աշխատանքն սկսելուց առաջ ձեռքերին քսել Սելիսկու կողմից առաջարկված պաստաները (մածուկ-ները):

Իհարկե, կան մաշկը պաշտպանող և այլ դեղամիջոցներ: Վերը նշված միջոցառումների կիրառումն անշուշտ կկանխի թարախաբշտիկային հիվանդությունների առաջացումը:

Գյուղատնտեսության մեջ ներկայումս կատարվում են

բազմատեսակ աշխատանքներ: Մաշկային միկրոտրավմաներ կարող են առաջանալ թե՛ ձեռքի աշխատանք կատարելիս և թե՛ մեքենաներ աշխատացնելիս: Միկրոտրավմաներից բացի գյուղատնտեսությամբ զբաղվողների մաշկը կեղտուվում է միմիական բազմաթիվ նյութերով (պարարտանյութեր և բուժանյութեր): Այդ իսկ պատճառով էլ արդյունաբերության մեջ աշխատող բանվորների համար վերը նշված պրոֆիլակտիկ միջոցառումները պետք է կիրառեն և գյուղատնտեսությամբ զբաղվողները:

Թարախաբշտիկային հիվանդությունների պրոֆիլակտիկան կենցաղում պայմանավորված է հիմնականում մարմնի և հագուստի մաքրությամբ: Եթե ոչ հաճախ, ապա գոնե շաբաթը մեկ անգամ անպայման պետք է լողանալ և փոխել սպիտակեղենը: Հատկապես շոգ օրերին թևատակերը, աճուկները, սեռական օրգանների շրջանը և ոտնաթաթերը գոլ կամ սենյակի ջերմաստիճանի ջրով օրը մեկ անգամ պետք է լվանալ և շփել: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ձեռքերի մաքրությանը, եղունգների խնամքին: Բնակարանը և կահկարասին հարկավոր է պահել մաքուր վիճակում, բնակարանը հաճախ օղափոխել, պատուհանների վարագույրները քաշել մի կողմ՝ որպեսզի արևի լույսը անարգել ներս թափանցի:

Թարախաբշտիկային հիվանդություններից, հատկապես սիկոզից, խուսափելու կարևոր պայման է մաքրության պահպանումը սափրվելիս՝ լինի դա տանը թե վարսավիրանոցում: Սափրվելուց առաջ անհրաժեշտ է ձեռքերը և դեմքը լվանար, Սափրվելու գործիքները պետք է պահել մաքուր վիճակում, Վարսավիրը պարտավոր է յուրաքանչյուր հաճախորդից հետո լվանալ ձեռքերը, փոխել անձեռոցիկը, այլ կերպ առած՝ պահպանել հիգիենայի կանոնները:

Առհասարակ կենցաղում առաջացած մանր տրավմանները, ինչպես արդեն նշվեց, անհրաժեշտ է մշակել բրիլիանտային կանաչի, մեթիլեն-կտապույտի սպիրտային լուծույթներով կամ էլ յոդի թուրմով: Վնասվածքի շրջակա մաշկը պետք է մաքրել սպիրտով կամ օդիով, ապա դնել վիրակապ: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր ընտանիք իր դեղարկղում պետք է ունենա նշված դեղանյութերը և բինու:

Իսկ ինչ վերաբերում է երեխաների և դպրոցականների

մոտ թարախաբշտիկային հիվանդությունների պրոֆիլակտիկային, պետք է ասել, որ դրանք ավելի հաճախ սկսվում են հենց ընտանիքում։ Եթե ընտանիքում սիստեմատիկաբար հետևում են հիգիենայի կանոնների պահպանմանը, ապա այդ կանոններին կհետևեն նաև երեխաները ու դա կդառնա նրանց համար սովորական երևույթ։ Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել երեխաների մաշկի, սպիտակեղենի և, առհասարակ, հագուստի մաքրությանը։ Երեխան պետք է ընտանիքում դաստիարակվի այն ոգով, որ ուտելուց առաջ, զանազան խաղերից հետո, փողոցից տուն վերադառնալիս ձեռքերը լվանա։ Փոքր երեխաների խաղալիքները անհրաժեշտ է հաճախակի լվանալ օճառով։ Դպրոցականները դպրոցում ավելի ամրացնում են հիգիենայի կանոնների պահպանումը, որոնց հիմքը դրվել է ընտանիքում։

Ուսուցչական կոլեկտիվը դպրոցում պետք է մշտական ուշադրություն դարձնի դպրոցականների հիգիենային և դպրոցի մաքրության պահպանմանը։

Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել դպրոցականների կողմից ձեռքի աշխատանքների կատարման սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմանը։ Սիստեմատիկ պետք է ստուգել երեխաների ձեռքերի, հագուստի մաքրությունը, եղունգների խնամքը։ Թարախաբշտիկային հիվանդությամբ հիվանդ երեխաներին արգելվում է մանկապարտեղ կամ դրպրոց հաճախել, որովհետև վարակի օջախ են։

Մաշկի թարախաբշտիկային հիվանդությունների պրոֆիլակտիկայի հարցում կարևոր տեղ է գրավում առողջ օրգանիզմը և կոփված մաշկը։

Խորհուրդ է տրվում գրքույկում նկարագրված հիվանդություններից որևէ մեկի առաջացման դեպքում մաշկի հիվանդմասը շթրջել-շլվանալ ջրով (որովհետև այդպես թարախաբշտիկի պարունակությունը կտարածվի շրջակա առողջմաշկին, և կառաջանան հիվանդության նոր օջախներ), այլ անմիջապես դիմել մաշկաբան բժշկին մասնագիտական լիարձիք բուժում ստանալու համար։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մաշկի թարախաբշտիկային հիվանդությունների հարուցիչները և առաջացման պայմանները	3
Ստաֆիլոկերից առաջացած թարախաբշտիկային հիվանդություններ	4
Ստրեպտոկերից առաջացած թարախաբշտիկային հիվանդություններ	9
Մաշկի թարախաբշտիկային հիվանդությունների պրոֆիլակտիկան	11

Խաշատրյան Ռուբեն Խաշատրյան

Մաշկի թարախաբշտիկային հիվանդություններ

Рубен Хачатурович Хачатрян

Кожные гнойные заболевания

(На армянском языке)

Издательство «Айастан»,
Ереван — 1979

Մասն. խմբագիր՝ Ա. Մ. Հացրուրյանյան, հրատ. խմբագիր՝ Գ. Գ. Դալլամյան, նկարիչ՝ Ա. Վ. Պողոսյան, գեղ. խմբագիր՝ Հ. Կ. Մնացականյան, տեխ. խմբագիր՝ Ա. Վ. Հովհաննիսյան, վերստուգող սրբագրիչ՝ Ա. Մ. Քոչարյան

ИБ—889

Հանձնված է շարվածքի 20 04 1979 թ.:

Ստորագրված է տպագրության 12. 07. 1979 թ.:

Թուղթ՝ $84 \times 108 \frac{1}{3} / 32$, տպագր. № 2: Տառատեսակ «Սովետական հայկական», տպ. եղանակը բարձր, $0,84 =$ պայմ. տպ. մամ., հրատ. $0,65$ մամ.: Պատվեր 467: ՎՖ 03358: Տպաքանակ 10000: Գինը՝ 3 կոպ.:

«Հայտատան» հրատարակություն, Երևան—9, Տեղյան 91:

Издательство «Айастан», Ереван—9, ул Теряна, 91

ՀՍՍՀ հրատարակությունների, պոլիգրաֆիայի և գրքի առեսրի գործերի պետական կոմիտեի № 2 տպարան, Երևան, Տեղյան 44:

Типография № 2 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм ССР, Ереван, ул Теряна, 44

